

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Վիկտոր Ալֆրեդի : (Տես երես 243)

(Հարունակութիւն և վերջ) :

Ալֆրեդեայ հռոմէական ողբերգութիւններուն վրայ ալ պզտիկ դադափար մը տալու համար՝ այս անգամ իր իշխանութեան Ա ողբերգութեան վրայ կ'ուզենք խօսիլ :

Յունիոս իշխանութեան Ա ողբերգութեան իշխանութեան երկանը հետ միացած՝ հռոմայ ժողովուրդը Տարկուինիոսի դէմ կը հանէ , որ բռնաւորութեամբ կը թաղարկէր . կը վերնայ թաղարկութիւնը ու տեղը հասարակապետութիւն կը կանգնուի : Տարկուինիոս պատերազմի դիմելէն առաջ՝ նախ մէյ մը խարդախութիւն կը փորձէ ու հաշտութեան դեսպան կը խաւրէ հռոմ . այս դաւաճանութեան շատերը կը միաբանին , որոնց հետ մէկտեղ նաեւ իշխանութեան երկու որդիքն ալ : իշխանութեան հասարակապետութեան ոգւով վառուած՝ ուրիշներուն հետ կը դատապարտէ մահուան իրեն որդիքներն ալ , և անոնց մահուան տեսարանին ներկայ կ'ըլլայ : Բայց որ հայր կրնայ իրեն միակ յուսոյ նպատակներուն վրայ ունեցած գութն ու գործը մէկգի թողուլ բոլորովին և անոնց արեան հեղեղներուն ու վերջին հեծեծանացը անխռով դէմքով ներկայ ըլլալ : Ինչոր համար Ալֆրեդի ալ Տիւտոս Ա իշխանի նկարագրած իշխանութեան պէս գործող նկարած է զիշխանութեան , որով անոր սաստիկ հայրենասիրութեան հետ՝ ծնելական սիրոյ ազնուական զգացմունքն ալ կը խառնէ :

Իր ողբերգութեան մէջ երրորդ հանգիսին՝ Սամիլիոս , Տարկուինիոսի դեսպանը , իրեն խորամանկ խաբէութիւնն ու ճարտար լեզուովը հռոմայ վիճակը ու դաւաճաններուն բազմութիւնը անոնկ վարպետ կերպով մը կը նկարագրէ իշխանութեան երկու որդեգր՝ Տիւտոսի ու Տիբերիոսի առջին , որ խեղճ աղաքը վախճալով թէ հայրենին մահ

հուան վտանգի մէջ է՝ դաւաճանութեան թղթին կը ստորագրեն : Երրորդ հանգիսին իշխանութեան կ'իմանայ իրեն որդեգր յանցանքը , կը կանչէ զանոնք իրեն դիմաց , և արտասուախառն ցաւով ու խանդաղատական ձայնով կը դանդաթի անոնց՝ հայրենեաց դէմ անոնկ դաւաճանութիւն ընելուն : Հինգերորդ հանգիսին՝ բոլոր հռոմայ , պատրկաց ու ծերակուտին առջին կը դատապարտէ արի ոգւով մը դաւաճանները ու իր որդիքն ալ միատեղ . բայց չկրնալով այսպիսի տեսարանի մը նայիլ , պատմութեան վերջը կը գոցէ : Երկու իշխանութեան մէկ կողմանէ իր որդեգրութեան բնածին զգացմունքը ցուցնելով՝ գութներնիս կը շարժէ . բայց մէկալ կողմանէ ալ բռնադատուելով դատապարտելու իր որդիքները՝ այնչափ ուրիշ քաղաքացիներուն ոգիքը չզայրացնելու համար , որոնք ալ այս դատապարտութեանս պատճառաւ կու լային , զարմացնել կուտայ իրեն վրայ : Սակայն այս որդեգր դրուագը , որ ետքը ողբերգութեան ամենէն էական կապը կ'ըլլայ ու անով կը լուծանի գործողութիւնը , ուշ կը սկսի երևնալ ողբերգութեան մէջ . որով այնչափ քիչ միջոցի մէջ չկրնար շատ դուրս ցատքել : իշխանութեան մէկ անգամ միայն կը խօսի իր որդեգրը հետ և ալ անկէջ ետքը հրապարակին մէջ դատաւոր կ'ըլլէ անոնց . ուստի որպէս զի ողբերգութեանն ու այդ կիբքը աւելի գեղեցկութիւն ու ասպարէզ առնեն , պէտք էր անոնց ու իրեն բաղդը աւելի ամոսար՝ թէ առանձին և թէ իշխանութեան առջին , և մինչև յետին վայրկեաններն ալ սրտին խռովութենէն այլայլած ու ինչ ընելիքը չգիտնալով՝ տարակուսէր զանոնք դատապարտելու . և ողբերգութեան սկիզբն ալ այս պարագաներէն առաջ դեռ ազատութեան առաջին վայրկեաններուն իրեն որդեգր վրայ շատ աւելի գուրգուրար , ու հայրենեաց երկու արժանի հասարակապետական քաղաքացիներ թողուլ եռանդազին խնամք մը ցուցնէր վրանին . և անոնք ալ իրենց այլևայլ գործերովը

Թէ իբրեւ հայրասէր և Թէ իբրեւ հայրենասէր սիրցընէին զիրենք : Այն առ տեն խիստ սրտաշարժ կ'ըլլար ետքի դիպուածը , ու ամենուն աչքէն գլուխ Թեան առատահոս արցունքներ Թափել կու տար . վասն զի ինչպէս ուրիշ անգամ մըն ալ ըսինք , ապստամբողական դաւաճանութիւնները այն ատեն աւելի հաճոյական կրնան ըլլալ , երբոր մէջերնին նաև փափուկ զգացմունք խառնուած ըլլայ . անոր համար ալ այս ողբերգութեան մէջ աւելի չորրորդ և հինգերորդ հանդէսները կը յափշտակեն զհանդիսականս . մէկալ կտորները , ուր որ զուտ հայրենասիրութեան կիրքը կը ցոլայ , Թէպէտ աղուոր , ճարտասանական ու վսեմ են , բայց սրտի հետ չեն խօսիր :

Բռնաւոր Թագաւորութեան լուծէն նոր ազատած ժողովուրդ մը տաքցընելու համար , որով Տարկուինեանք մէյ մ'ալ Հռոմայ երեսը չկարենան տեսնել , Բրուտոս ճարտասանութիւնը գէնք կ'առնէ իրեն . բայց այնպիսի տաքնապալից ժամանակ , ուրախութեալ բորբոքած , գործոյն յաջողելուն վրայ երկբայ , և այլ բիւրաւոր զանազան մտածութիւններու մէջ ընկղմած առ տենը՝ չկրնար կարգաւորեալ ու վայելուչ ճարտասանութիւն ընել . հապա ինչպէս որ ազատասիրութեան կիրքը կ'աղգէ իրեն՝ առանց խօսակցութեան ուղիղ կարգի ու կտրուկ կտրուկ իմաստներով . որով խօսքը աւելի ուժ կ'առնէ ու Բրուտոսի ներքին վիճակը կ'իմացուի . և ահաւասիկ Ալֆիէրի բաւականապէս ասանկ ըրած է : Այս խօսքերուս մէջտեղը՝ ուկրետիայի մարմինը ներս կու գայ . բնական է որ այսպիսի տեսարանով մը աւելի կրնայ բորբոքիլ ժողովրդեան դիւրագրգիռ սիրտը , և ասոր մէջ լաւ դիտած կ'երևայ Ալֆիէրի ժողովրդեան բնաւորութիւնը : Բայց որչափ աւելի գերազանց ճարտասանութեամբ կրնար իր

խօսքերը կենդանացընել . Տարկուինեանց շարունակական բռնաւորութիւն , որն որ հեծել կու տար ամբողջ ժողովուրդ մը , Աուկրետիայի մահուան տեսարանը , ազատութեան գեղեցկութիւնը՝ Թէ որ բանաստեղծ Վեմուս Թենեսի կրակով ու պարզութեամբ մը նկարագրէր , յիշաւի կրնար ժողովուրդը դողալ բռնաւորներէ ու զղուիլ անոնց հպատակ ըլլալէն . և Թէպէտ ըստ ինքեան վարի աստիճանի ժողովուրդը համոզելու համար զարմանալի ճարտասանութիւն մը հարկաւոր չէ , բայց մտքերնիս հին ժամանակներու վրայ այս կեղծիքը տեսնել կ'ախորժի : Այսպէս հինգերորդ հանդէսը , ուր որ դաւաճաններուն անունները կը յայտնուին և Բրուտոս կը յանդիմանէ զԺողովուրդն ու իրեն իշխանակից Ալուատինոս հիւպատոսը՝ իրեն որդւոցը վրայ գլուխ զգալնուն համար , վերջապէս մինչև անոնց մահուան կտորը՝ շատ յաջողած է Ալֆիէրի , ու իրեն տողերը կը բորբոքեն զմարդ . որչափ աւելի գեղեցիկ տեսարան ուրեմն կրնար ըլլալ՝ Թէ որ վերը յիշած յատկութիւնները տար Բրուտոսի անձին :

Տիտոս ու Տիբերիոս լաւ ձևացուած են . մանաւանդ Տիբերիոս , որ Տիտոսէն աւելի պզտիկ է հասակաւ ու անոր հետ միշտ նոյն կամքը ունենալուն փափաքով դաւաճանութեան թղթին ստորագրած է , Թէ հայրենիքը կը սիրէ ու Թէ հայրը , և անկեղծ ոգի մը ունի , որ սիրելի ընել կու տայ զինքը . երանի Թէ Ալֆիէրի ասոր վրայ որչափ կարելի էր՝ աւելի շուայէր փափկութիւնը : Հինգերորդ հանդիսին երբոր բոլոր դաւաճանները կորագլուխ պատժոյն տեղը կու գան , ու իրենց ըրած մեծեղեռն յանցանքը ճանչնալով բերաննին կը կապուի , յանկարծ բոլոր այն բազմութեան մէջէն պատանեոյ մը ձայն դուրս կը ցատքէ , ու իրեն պզտիկ եղբայրը ցուցընելով կը կանչէ .

Մի ոք եւեթ համայն ի մեզ , մի լոկ ի մահ մատնի անմեզ ,

Եւ սա ինքն է :

Ժող .

Ո՛վ աղէտից . տեսէք խօսի նա զեղբորէն :

բայց Տիբերիոս չուզէնալով մահուան միջոցին ալ իր եղբօրմէն զատուիլ՝ կը պատասխանէ բարձրաձայն .

Մի դըմին ակն ունիցիք . կամ երկոքին զոյգ անյանց
Կամ երկոքին մեղապարտ . զնորուն անուամբն ի մուրհակին
Գըրեալ եւ իմն է անուն :

Այս երկու պզտիկ խօսքերը կը յափըշտակեն զմարդ , և ասոնցմով ալ միայն կ'իմացուի որ Տիտոս ու Տիբերիոս բոլորովին անմեղ են :

Սամիլիոսը այս ողբերգութեան մէջ ցած , կեղծաւոր , յանձնապաստան , յանդուգն ու խորամանկ է . բռնաւորի մը դէսպան ըլլալուն՝ պէտք էր որ այս յատկութիւններն ունենար , և Ալֆիէրի ասոնցմով միայն կրնար Սամիլիոսը դուրս ցատքեցընել :

Ալֆիէրի ժողովուրդը ընդհանուր մը ներս բերած է ու իբրեւ մէկ անձ մը ձևացուցած . և այս պատճառաւ ժողովրդեան բերանը դրած խօսքերը թէ պէտ բաւական ռամկի մտածութեանը յարմարցուցած է , որ առջի խօսքով կը տաքնան ու երկրորդով կը պաղին , բայց միշտ մէկ վեհութիւն մը ունին : Ատ աւելի լաւ կ'ըլլար որ այլեայլ անձինքներ խօսէին տեսարանին մէջ՝ բոլորովին իրենց ռամկական անդրադարձութիւններովն ու մտածութիւններովը . վասն զի անով ժողովրդեան բնաւորութիւնը աղէկ դուրս կը ցատքէր և կ'իմացուէր թէ վարի աստիճանի մարդկանց միտքը ինչպիսի կերպով կը բորբոքի ու որչափ կը թեալ մարդիկներէն աննման կերպով ազատութեան ձեռք կը զարնէ : Ինչպէս որ դեռ բռնաւորութենէ նոր ազատած ժողովուրդ մը չկրնար ալ շատ դիւցազնաբար խօսիլ ու դիւցազնաբար գործել : Այս բանիս մէջ Ալֆիէրի իրեն օրինակ պէտք էր առնէր զԱլքսէր , որ իրեն անկիրթ կարծուած հանձարին տակ աննման հանձար ու անկարծելի փիլիսոփայութիւն կը պարունակէ : Բայց ուրախութեամբ դարձեալ կ'ուզէնք հօս հռչակել Ալֆիէրեայ այդ պարծանքը , որ Հռոմայեցւոց բարձր ոգին լաւ նկարագրած է այս ողբերգութեան մէջ , և անոնց խօսքերը՝ ազատասիրական , հասարակապետական

ու կրակոտ կտրուկ ճարտասանութեամբ կենդանացուցած է . բոլոր ողբերգութիւնը այս բանիս վկայ է , բայց մասնաւորապէս երկրորդ ու հինգերորդ հանդէսները :

Հոս կը լմնցընենք Ալֆիէրեայ մատենագրական ճոխ վարուց պատկերը , որ իր տեսարաններուն լիութեամբը դեռ շատ աւելի երկայն մտածութիւններու ասպարէզ կու տար . կը յուսանք որ այս եօթը հատուածով Ալֆիէրեայ ողբերգութիւններուն առանձին կերպը , կատարելութիւններն ու պակսութիւնները որչափ որ հնար էր այս համառօտ սահմանին մէջ՝ կրցանք բաւականապէս ծանօթացընել մեր բանասէր ընթերցողներուն : Բայց որպէս զի այդ մեծ հանձարին կենդանի գաղափարը տանք մեր ազգայնոց ու իրեն բանաստեղծութեան աստիճանը մատնանիշ ցուցընենք , վայելուչ կը սեպենք որ իրեն Սալուստիոս ողբերգութեան թարգմանութիւնը՝ օրագրովս հրատարակենք , 'ի վայելս ողբերգութիւն սիրող ազգայիններուն :

Հ. Գ. Ծ

ՄԱՆՐԱՎԻՊ

Կորստած տղայ մը :

Իւրիկիոյ Կորիցիա քաղաքին խից և համերց վարժարանին մէջ հիմա տըղայ մը կայ , որ թէպէտ այս երկու պակսութիւններէն մէկն ալ չունի , բայց մարդկութիւն ու մարդկային գաղափարներ առնելու համար անոնց պէս նախնական կը թուութեան կարօտ է : Եւ կէց իրեք տարի առաջ երկու զինուոր Սոդրիոյ անտառներէն մէկուն մէջ քա